Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 857 - Ա
որոշման

«ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ամառային անվճար հանգիստ տրամադրել Հայաստանի տարբեր մարզերի, ինչպես նաև՝ Վրաստանի հայաբնակ բնակավայրերի անապահով ընտանիքների տարեկան 1000 երեխաների՝ Ծաղկաձորի «Տիրամայր Հայաստանի Կուսաստան» ամառային ճամբարում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	1) «Ձինիշյան Հիշատակի» հիմնադրամ (Հայաստան, Երևան, Արովյան 34, բն. 5)– տարեկան 4,850,000 դրամ. 2) «Ռենովաբիս» բարեգործական կազմակերպություն (E.V.2/Domberg 273, Deutschland)–տարեկան՝ 8,500,000 դրամ. 3) «Օվոը Դ՛Օրիան» բարեգործական կազմակերպություն (3 avenue de la Gare, 35600 Redon, France)– տարեկան՝ 8,000,000 դրամ. 4) «Քինդեր Միշընսվերք» բարեգործական կազմակերպություն ("Die Sternsinger" e.V.Stephanstraße 35 52064 Aachen, Germany)– տարեկան՝ 5,500,000 դրամ. 5) «ՔՆԵՎԱ Նյու Յորք» բարեգործական կազմակերպություն (1011 First Avenue New York, N.Y. 10022-4195, USA)– տարեկան 5,000,000 դրամ. 6) Ֆրանցիսկ Քոֆլեր (2 Wilhelm Str. 93, 50321 Bruehl, Germany) - տարեկան՝ 7,000,000 դրամ. 7) «Ասոսասիոն Ալյանս Արմենիեն» բարեգործական կազմակերպություն (10B Rue Thouin 3, Paris, France)-տարեկան մոտ 12,500,000 դրամ.

		8) «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)» (1060 First Avenue, Suite 400 King of Prussia, PA 19406, USA)- տարեկան՝ 22,000,000 դրամ. 9) Անի Ճուհերեան (10 rue Lavoisier 75008 Paris, France)-տարեկան 19,000,000 դրամ. 10) «Հրայր և Աննա Հովնանյան» հիմնադրամ (State Route 66 FL-4-2 Tinton Falls, NY USA)– տարեկան՝ 15,000,000 դրամ. 11) «Կիրխ ին Նոթ» բարեգործական կազմակերպություն (Lorenzonistraße 62 81545 Munich, Germany)- տարեկան՝ 10,550,000 դրամ. 12) Ֆերիդ Թեջիմեր (100 Northdale RoadToronto, Ont. M2L 2M1, Canada)- տարեկան՝ 7,500,000 դրամ. 13) Եղբայր Էլուա Հաննոն (Prieuré Notre Dame du Cénacle 5 bis rue du Prieuré,03260 Saint Germain des Fossés, France)- տարեկան՝ 3,000,000 դրամ:
4.	Ծրագիրը կատարողը	«Անարատ Հղության Հայ Քույրերի Միաբանության Տիրամայր Հայաստանի Կուսաստան» կրոնական կազմակերպություն, ՀՎՀՀ՝ 05513266 (Գյումրի, Ե. Չարենցի 6)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաք Սարալանջի 2, «Տիրամայր Հայաստանի Կուսաստան» ճամբար, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	385,200,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Շիրակի, Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Արարատի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի, Արմավիրի մարզերի, Երևան քաղաքի, ինչպես նաև Վրաստանի հայաբնակ բնակավայրերի անապահով ընտանիքների 6-ից 16 տարեկան 1000 երեխաներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) ճամբարի մասնաշենքերի և տարածքի վերանորոգման և վերակահավորման աշխատանքների իրականացում՝ 180,000,000 դրամ (տարեկան՝ 60,000,000 դրամ), նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը. 2) ճամբարի կոմունալ-կենցաղային ծախսեր՝ 28,500,000 դրամ (տարեկան՝ 9,500,000 դրամ), նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը. 3) սննդի, տնտեսական պարագաների, գրենական պիտույքների, սպորտային գույքի, հագուստեղենի և կոշկեղենի ձեռքբերման ծախսեր՝ 114,000,000 դրամ

		(տարեկան՝ 38,000,000 դրամ), նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը. 4) ճամբարի գործունեության, ինչպես նաև ճամբարականներին բաժանելու համար կոշկեղենի, հագուստի, հիգիենիկ, տնտեսական պարագաների, գրենական պիտույքների, կահույքի ներմուծում կամ ձեռքբերում՝60,000,000 դրամ (տարեկան՝ 20,000,000 դրամ), նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը. 5) ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման ծախսեր՝ 2,700,000 դրամ (տարեկան՝ 900,000 դրամ), նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) ճամբարի մասնաշենքերի և տարածքի վերանորոգման և վերակահավորման աշխատանքների իրականացում՝ 180,000,000 դրամ (տարեկան՝ 60,000,000 դրամ), առանց ավելացված արժեքի հարկի. 2) բնական գազի մատակարարման ծառայությունների ձեռքբերում՝ 15,000,000 դրամ (տարեկան՝ 5,000,000 դրամ), առանց ավելացված արժեքի հարկի. 3) էլեկտրական էներգիայի մատակարարման ծառայությունների ձեռքբերում՝ 7,500,000 դրամ (տարեկան՝ 2,500,000 դրամ), առանց ավելացված արժեքի հարկի. 4) խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների ձեռքբերում՝ 3,000,000 դրամ (տարեկան՝ 1,000,000 դրամ), առանց ավելացված արժեքի հարկի. 5) հեռախոսակապի, ինտերնետի և բջջային հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերում՝ 3,000,000 դրամ (տարեկան՝ 1,000,000 դրամ), առանց ավելացված արժեքի հարկի. 6) տնտեսական ապրանքների, սպորտային գույքի, հագուստեղենի և կոշկեղենի ձեռքբերում՝ 7,500,000 դրամ (տարեկան՝ 2,500,000 դրամ), առանց ավելացված արժեքի հարկի. 7) գրենական պիտույքների ձեռքբերում 1,500,000 դրամ (տարեկան՝ 500,000 դրամ), առանց ավելացված արժեքի հարկի. 8) սննդի ձեռքբերում՝ 105,000,000 դրամ (տարեկան՝ 35,000,000 դրամ), առանց ավելացված արժեքի հարկի.

		9) կոշկեղենի, հագուստի, հիգիենիկ, տնտեսական պարագաների, գրենական պիտույքների, կահույքի ներմուծում կամ ձեռքբերում՝ 60,000,000 դրամ (տարեկան՝ 20,000,000 դրամ), առանց ավելացված արժեքի հարկի. 10) ֆինանսական և ծրագրային աուդիտի ծառայությունների ձեռքբերում՝ 2,700,000 դրամ (տարեկան 900,000 դրամ), առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված ծախսեր այս ծրագրում չեն նախատեսված, քանի որ կազմակերպությունը վարչական և կազմակերպչական ծախսերի համար ունի առանձին ֆինանսավորում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Միասնական սոցիալական ծառայության և Ծաղկաձորի քաղաքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հիմնական վերահսկողությունը կիրականացվի ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք կներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների: Ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

03.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ